ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ «ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ մարտի 30-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նորակառույց «Կիլիկիա» թանգարան-մատենադարանի բացման արարողությանը ներկա գտնվեց նաև Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պատվիրակությունը՝ Սյունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, հոգշ. Տ. Արտակ աբդ. Տիգրանյանը և Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը:

Պատվիրակությունն իր հետ Անթիլիաս էր տարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքն ու նվերը՝ 17-րդ դարի մի ձեռնախաչ:

Թանգարանի բացմանը Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը ընթերցեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը, որում Նորին Սրբությունը հույս է հայտնում, թե «Անթիլիասի Թանգարան-Մատենադարանը պիտի դառնա ոչ սոսկ ցուցանիշ մեր հայ քաղաքակերտական ստեղծագործականության քաղաքակրթական օրրան լիբանանյան հարուստ հողին վրա, այլ պիտի դառնա քաղաքակրթող օջախ մեր նոր սերունդին համար»:

Դեռևս Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս եղած տարիներին Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսն ունեցավ «Կիլիկիա» թանգարան-մատենադարանի կառուցման մտահղացումը, որի շարունակողը դարձավ Կիլիկիո հաջորդ Հայրապետ Արամ Ա Կաթողիկոսը:

Թանգարանում հավաքված են ուրարտական ժամանակներից մինչև 19-րդ դարի ցուցանմուշներ՝ դարավոր մասունքներ, եկեղեցական ոսկեզօծ և արծաթյա իրեր, ծիսական զգեստներ, ձեռագիր ու տպագիր գրքեր, խաչքարեր, թագավորական դրամներ, հնագիտական իրեր, որոնք բերվել են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմական նստավայր Սիս մայրաքաղաքի կաթողիկոսարանից:

Շենքի վերջին՝ երրորդ հարկը հատկացված է 19-րդ դարից մինչև ժամանակակից նկարիչների և քանդակագործների ստեղծագործություններին:

«Կիլիկիա» թանգարան-մատենադարանը նկատվեց մշակութային կարևոր օջախ ոչ միայն հայության, այլև Լիբանանի համար:

Թանգարանի բացմանը ներկա էր նաև Լիբանանի նախագահը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ